ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ
ԱԳՐԱՐԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՀԻՄՆԱԴՐԱՄ

ARMENIAN NATIONAL
AGRARIAN UNIVERSITY

FOUNDATION

ՀՀ, Երևան, 0009, Տերյան 74
Հեռ.՝ (+374 10) 58 19 12
Էլ. փոստ՝ info@anau.am
www.anau.am

74 Teryan Str., 0009, Yerevan, RA
Tel: (+374 10) 58 19 12
E-mail: info@anau.am
www.anau.am

«04» 02 2025թ. № 01/Ռ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԳՐԱՐԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՌԵԿՏՈՐԻ Պ/Կ-ի

ՄԱՍՆԱԿՑԻՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ԳՈՐԾԸՆԹԱՑԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔ ՉՈՒՆԵՑՈՂ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՑՈՒՑԱԿՈՒՄ ՆԵՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) 6-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված պահանջների համաձայն, ուսումնասիրելով ՀԱԱՀ-ԷԱՃԱՊՁԲ-24/85 ծածկագրով գնման ընթացակարգի (այսուհետ՝ Ընթացակարգ) պատասխանատու ստորաբաժանման ղեկավարի կողմից 2025թ. փետրվարի 3 զեկուցագրով «Որոտ» ՍՊԸ-ին (այսուհետ նաև՝ Մասնակից) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով ներկայացված հիմքերը, պարզեցի հետևյալը.

1. **<u>Պատասխանատու ստորաբաժանման ղեկավարի ներկայացրած փաստերը և պահանջը.</u>**

Պատասխանատու ստորաբաժանման ղեկավարի «Հայաստանի ազգային ագրարային համալսարան» հիմնադրամի ռեկտորի պ/կ-ին ուղղված 26.12.2024թ. և 03.02.2025թ. զեկուցագրերով հայտնել է հետևյալը.

«Հայաստանի ազգային ագրարային համալսարան» հիմնադրամի /այսուհետ նաև՝ Հիմնադրամ/ կարիքների համար 2024 թվականի ապրիլի 26-ին հայտարարված լաբորատոր պահարանի ձեռքբերման ՀԱԱՀ-ԷԱՃԱՊՁԲ-24/85 ծածկագրով գնման ընթացակարգի (այսուհետ՝ Ընթացակարգ) շրջանակներում 1-ին չափաբաժնի մասով, որպես ընտրված (հաղթող) մասնակից է ճանաչվել «Որոտ» ՍՊԸ-ն (ՀՎՀՀ՝ 08263401, գործունեության հասցե՝ Ադանա 79, հեռ.՝ +374 44948114, էլեկտրոնային հասցե՝ payvorot@gmail.com), որի հետ 05.06.2024թ. կնքվել է ՀԱԱՀ-ԷԱՃԱՊՁԲ-24/85-1 ծածկագրով ապրանքի մատակարարման պետական գնման պայմանագիր (այսուհետ՝ Պայմանագիր):

Սակայն վերջինս 1-ին չափաբաժնի մասով ապրանքը Պայմանագրով սահմանված ժամկետում չի մատակարարել:

Հաշվի առնելով վերոգրյալը, ինչպես նաև այն հանգամանքը, որ «Որոտ» ՍՊԸ-ն թույլ է տվել պայմանագրային պարտավորությունների խախտում՝ որոշում է կայացվել միակողմանի ամբողջությամբ լուծել Պայմանագիրը, միաժամանակ առաջարկելով իրականացնել Պայմանագրի շրջանակում ներկայացված տուժանքների մասին

համաձայնագրերի, համապատասխանաբար որակավորման ապահովման մասով 165000 (մեկ հարյուր վաթսունհինգ հազար) ՀՀ դրամի չափով և պայմանագրի կատարման ապահովման մասով՝ 110000 (մեկ հարյուր տասը հազար) ՀՀ դրամի չափով, գումարի գանձումը:

Նշյալի մասին՝ 14.**01.2025թ**. գրությամբ տեղեկացվել է նաև Մասնակցին սպասարկող բանկային կազմակերպությանը:

Հաշվի առնելով, որ «Հայաստանի ազգային ագրարային համալսարան» հիմնադրամի և «Որոտ» ՍՊԸ-ի միջև կնքված Պայմանագրով սահմանված պահանջների համաձայն «Հայաստանի ազգային ագրարային համալսարան» հիմնադրամը 2025թ. հունվարի 14-ին միակողմանի լուծելով Պայմանագիրը պատշաճ կերպով **14.01.2025թ**. ծանուցել է «Որոտ» ՍՊԸ-ին հիշյալի մասին՝ միաժամանակ առաջարկելով սահմանված ժամկետում ապահովել Պայմանագրի շրջանակում ներկայացված տուժանքների մասին համաձայնագրերի, մասնավորապես որակավորման ապահովման և պայմանագրի կատարման ապահովման գումարների գանձումը, սակայն «Որոտ» ՍՊԸ-ի կողմից չի ապահովվել վերոնշյալ պահանջի կատարումը՝ առաջարկում ենք «Որոտ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով կայացնել պատճառաբանված որոշում և հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված պահանջները՝ հիշյալ որոշումը գրավոր ուղարկել ՀՀ ֆինանսների նախարարություն «Որոտ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով:

2. <u>Գործի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

Ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. «Հայաստանի ազգային ագրարային համալսարան» հիմնադրամի /այսուհետ նաև՝ Հիմնադրամ/ կարիքների համար 2024 թվականի ապրիլի 26-ին հայտարարված լաբորատոր պահարանի ձեռքբերման ՀԱԱՀ-ԷԱՃԱՊՁԲ-24/85 ծածկագրով գնման ընթացակարգի (այսուհետ՝ Ընթացակարգ) շրջանակներում 1-ին չափաբաժնի մասով, որպես ընտրված (հաղթող) մասնակից է ճանաչվել «Որոտ» ՍՊԸ-ն (ՀՎՀՀ՝ 08263401, գործունեության հասցե՝ Ադանա 79, հեռ.՝ +374 44948114, էլեկտրոնային հասցե՝ payvorot@gmail.com), որի հետ 05.06.2024թ. կնքվել է ՀԱԱՀ-ԷԱՃԱՊՁԲ-24/85-1 ծածկագրով ապրանքի մատակարարման պետական գնման պայմանագիր (այսուհետ՝ Պայմանագիր):

2. Սակայն վերջինս 1-ին չափաբաժնի մասով ապրանքը Պայմանագրով սահմանված ժամկետում չի մատակարարել:

3. Հաշվի առնելով վերոգրյալը, ինչպես նաև այն հանգամանքը, որ «Որոտ» ՍՊԸ-ն թույլ է տվել պայմանագրային պարտավորությունների խախտում՝ որոշում է կայացվել միակողմանի ամբողջությամբ լուծել Պայմանագիրը, միաժամանակ առաջարկելով իրականացնել Պայմանագրի շրջանակում ներկայացված տուժանքների մասին

համաձայնագրերի, համապատասխանաբար որակավորման ապահովման մասով 165000 (մեկ հարյուր վաթսունհինգ հազար) ՀՀ դրամի չափով և պայմանագրի կատարման ապահովման մասով՝ 110000 (մեկ հարյուր տասը հազար) ՀՀ դրամի չափով, գումարի գանձումը:

4. «Որոտ» ՍՊԸ-ի կողմից չի ապահովվել Պայմանագրի շրջանակում ներկայացված տուժանքների մասին համաձայնագրերի, մասնավորապես որակավորման ապահովման և պայմանագրի կատարման ապահովման գումարների գանձումը:

3. Պատվիրատուի ղեկավարի հիմնավորումները և եզրահանգումը.

Պատվիրատուի ղեկավար՝ «Հայաստանի ազգային ագրարային համալսարան» հիմնադրամի ռեկտորի պ/կ Հ. Զաքոյանս, ուսումնասիրելով Պատասխանատու ստորաբաժանման ղեկավարի կողմից ներկայացված զեկուցագիրը և կից փաստաթղթերը, հայտնում եմ հետևյալը.

Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն Մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը և մասնակիցը հրավերով և (կամ) պայմանագրով սահմանված ժամկետում չի վճարել հայտի, պայմանագրի և (կամ) որակավորման ապահովման գումարը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել կամ զրկվել է պայմանագիր կնքելու իրավունքից:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն Գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակը, այդ թվում՝ ռուսերեն, վարում և հրապարակում է լիազորված մարմինը: Լիազորված մարմինը մասնակցին ներառում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում պատվիրատուի ղեկավարի պատճառաբանված որոշման հիման վրա: Սույն մասում նշված որոշումը պատվիրատուի ղեկավարը կայացնում է գնման ընթացակարգը չկայացած հայտարարվելու կամ կնքված պայմանագրի վերաբերյալ հայտարարությունը հրապարակելու կամ պայմանագիրը միակողմանի լուծելու մասին հայտարարությունը հրապարակելու օրվան հաջորդող տասն օրվա ընթացքում: Որոշումը կայացվելուն հաջորդող օրը այն տրամադրվում է լիազորված մարմնին և մասնակցին: Լիազորված մարմինը մասնակցին ներառում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում որոշումն ստանալուն հաջորդող քառասուներորդ օրվան հաջորդող հինգ օրվա ընթացքում, իսկ որոշումն ստանալուն հաջորդող քառասուներորդ օրվա դրությամբ մասնակցի կողմից որոշման բողոքարկման վերաբերյալ հարուցված և չավարտված դատական գործի առկայության դեպքում՝ տվյալ դատական գործով եզրափակիչ դատական ակտն ուժի մեջ մտնելու

օրվան հաջորդող հինգ օրվա ընթացքում, եթե դատական քննության արդյունքով որոշման կատարման հնարավորությունը չի վերացել: Մասնակիցը նշված ցուցակում ընդգրկվում է ներառվելու օրվան հաջորդող օրվանից երկու տարի ժամկետով:

Օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն, Պայմանագրի և (կամ) որակավորման ապահովում ներկայացնելու պահանջի հիման վրա այն ստանալու օրվանից հետո՝ հինգ աշխատանքային օրվա ընթացքում, ընտրված մասնակիցը պարտավոր է ներկայացնել ապահովումը: Եթե ապահովումը ներկայացվում է բանկային երաշխիքի ձևով, ապա սույն կետով նախատեսված ժամկետը սահմանվում է 10 աշխատանքային օր: Ընտրված մասնակցի հետ պայմանագիր կնքվում է, եթե վերջինս ներկայացնում է պայմանագրի և (կամ) որակավորման ապահովումը:

Օրենքի 36-րդ հոդվածի 3-րդ կետի համաձայն, Եթե ընտրված մասնակիցը պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծն ստանալուց հետո սույն օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված ժամկետում չի ստորագրում պայմանագիրը կամ պատվիրատուին չի ներկայացնում պայմանագրի և (կամ) որակավորման ապահովումը, իսկ կնքվելիք պայմանագրով կանխավճար նախատեսված լինելու դեպքում՝ նաև կանխավճարի ապահովումը, ապա նա զրկվում է պայմանագիրն ստորագրելու իրավունքից:

Այսպիսով՝

«Հայաստանի ազգային ագրարային համալսարան» հիմնադրամի /այսուհետ նաև՝ Հիմնադրամ/ կարիքների համար 2024 թվականի ապրիլի 26-ին հայտարարված լաբորատոր պահարանի ձեռքբերման ՀԱԱՀ-ԷԱՃԱՊՁԲ-24/85 ծածկագրով Ընթացակարգի շրջանակներում 1-ին չափաբաժնի մասով, որպես ընտրված (հաղթող) մասնակից է ճանաչվել «Որոտ» ՍՊԸ-ն, որի հետ կնքվել է Պայմանագիր:

Սակայն վերջինս 1-ին չափաբաժնի մասով ապրանքը Պայմանագրով սահմանված ժամկետում չի մատակարարել:

Մասնակցին՝ 14.01.2025թ. գրությամբ առաջարկվել է հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված պահանջները՝ 10 աշխատանքային օրվա ընթացում ապահովել տուժանքների մասին համաձայնագրերում նշված վճարների գանձումը:

1. Սահմանված ժամկետում «Որոտ» ՍՊԸ-ի կողմից չի ապահովվել Պայմանագրի շրջանակում ներկայացված տուժանքների մասին համաձայնագրերի, մասնավորապես որակավորման ապահովման և պայմանագրի կատարման ապահովման գումարների գանձումը:
2. Ուսումնասիրելով հիմքերը, դրանք համադրելով առկա ապացույցների հետ՝ արձանագրում եմ, որ «Որոտ» ՍՊԸ-ն թույլ է տվել Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի խախտում, քանի որ խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը և մասնակիցը հրավերով և (կամ) պայմանագրով

սահմանված ժամկետում չի վճարել հայտի, պայմանագրի և (կամ) որակավորման ապահովման գումարը:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն ՀՀ ֆինանսների նախարարությունը մասնակցին ներառում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում Պատվիրատուի ղեկավարի պատճառաբանված որոշման հիման վրա:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն Մասնակիցը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկվում է ներառվելու օրվան հաջորդող օրվանից երկու տարի ժամկետով:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասով՝

ՈՐՈՇԵՑԻ

1. Պատասխանատու ստորաբաժանման ղեկավարի կողմից ներկայացրած հիմքերը՝ «Որոտ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցողների ցուցակում ներառելու համար, գնահատել բավարար:
2. «Որոտ» ՍՊԸ-ի ներքոնշյալ տվյալները համապատասխան հիմքերով գրավոր ուղարկել լիազորված մարմնին՝ ՀՀ ֆինանսների նախարարությանը, «Որոտ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով.

Մասնակցի						
Անվանումը	ՀՎՀՀ/ ֆիզ. անձի դեպքում հանրային ծառայության համարանիշը	գործունեությունն հասցեն	գնումների գործընթացին մասնակցելու պայմաններին չբավարարելու իրավական հիմքը			ցուցակում ներառելու մասին պատվիրատուի ղեկավարի կայացրած որոշման ամսաթիվը և Ընթացակարգի ծածկագիրը
			խախտել է գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը	խախտել է պայմանագրով նախատեսված պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը	որպես ընտրված մասնակից հրաժարվել կամ զրկվել է պայմանագիր կնքելու իրավունքից	
«Որոտ» ՍՊԸ	08263401	Ադանա 79 +37444948114	X	X		04.02.2025թ. ՀԱԱՀ-ԷԱՃԱՊՁԲ-24/85

Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվան հաջորդող օրը:

ՌԵԿՏՈՐԻ Պ/Կ՝ **Հ. ՉԱՔՈՅԱՆ**